

Վահե Գ. Առաքելյան

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ*

Մուտք

Հայերենի ու պարսկերենի փոխազդեցությունները նախ և առաջ պայմանավորված են ծագումնաբանական ընդհանրություններով: Անհերքելի է նաև հայոց լեզվի կազմության վրա պարսկերենի միակողմանի ազդեցության փաստը, ինչը նկատելի է առաջին հերթին հայերենի ներքին կազմության՝ շարադասության և համաձայնության մեջ¹, ապա նաև՝ իրանահայ բարբառներում² (առանց նկատի ունենալու դրանց դասակարգումը): Ուշադրության են արժանի երկու լեզուների բառակազմության յուրահատկությունները, թվականների կազմության ընդհանուր գծերը, հոլովական համակարգի զուգահեռները, բայերի, մակբայների, դերբայների, նախադրությունների և քերականական այլ կատեգորիաների ընդհանուր եզրերը: Եվ քանի որ քերականական իմաստներն արտահայտում են մտածողության կատեգորիաները, հետևաբար՝ նման ընդհանրությունները սերտ կապի մեջ են մտածողության հետ³, իսկ ամբողջական մտածողությունը կազմվում է հենց նախադասությունների՝ տարբեր արտահայտչաձևերի միասնությամբ⁴:

1. Հայերենի և պարսկերենի որոշ ընդհանրություններ

Հայերենն ու պարսկերենը ունեն բազմաթիվ ընդհանրություններ՝ հաշվի առնելով երկու ժողովուրդների դարավոր շփումները: Այս լեզուների բառակազմության եղանակները նման են: Այսպես, թե՛ հայերենում և թե՛

* Ընդունվել է տպագրության 21.02.2011:

1 Տե՛ս Աճառյան Զ., Հայերեն արմատական բառարան, հ. 4, Եր., 1979, էջ 309: Տե՛ս նաև Վ. Առաքելյան, Հայերեն և պարսկերեն բառերի ու բառարմատների իմաստային զարգացման ընդհանուր օրինաչափությունների շուրջ, «Orientalia», ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի երիտասարդ դասախոսների և ասպիրանտների գիտական հոդվածների ժողովածու, պրակ 9, Եր., 2009, էջ 19:

2 Զ. Աճառյանի իր «Հայ բարբառագիտության» մեջ **Ջուղայի**, **Մարաղայի** և **Խոյի** լեզվավիճակները որակել է որպես բարբառներ՝ առաջինը հատկացնելով **ուն**, իսկ մյուս երկուսը՝ էլ ճյուղին: Հետագայում դրանք ենթարկվել են ուսումնասիրության Զ. Աճառյանի և Ս. Ասատրյանի կողմից: **Թավրիզի** լեզվավիճակը Զ. Աճառյանը որակել է որպես ենթաբարբառ և հատկացրել **Արարատյան** բարբառին: **Ուրմիայի** լեզվավիճակը համարել է **Մարաղայի** բարբառի ենթաբարբառ:

3 Տե՛ս Է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, ԵՊՀ հրատ., Եր., 1952, էջ 322:

4 Տե՛ս նույն տեղում, էջ 381:

պարսկերենում բարդ բառեր կարելի է կազմել երկու գոյականների միակցումով, օրինակ՝

Բանուգործ	کار و بار
-----------	-----------

Բարդ բառեր կարելի է կազմել ածականի ու գոյականի միակցումով, օրինակ՝

Քաղցրալեզու	شیرین زبان
-------------	------------

Երկու գոյականի միակցումով, օրինակ՝

Որձևէզ	نرو ماده
--------	----------

Կարելի է երկու բայափոխքերի միակցումով կազմել բարդ բառ, օրինակ՝

Առևտուր	خرید و فروش
---------	-------------

Բառեր, որոնցում մի եզրը բայարմատ է և կատարում է գլխավոր դերը, իսկ մյուսը նրա լրացուցիչն է, օրինակ՝

Բանիմաց	سخندان
---------	--------

Հայերենում բարդ բառի երկու եզրերի շարքը փոխելով՝ երբեմն փոխվում են նաև իմաստն ու կիրառության ոլորտը. Օրինակ՝ **պատվարժան** և **արժանապատիվ** բառերի կազմությունը նույնն է, սակայն առաջինը կիրառվում է աշխարհականների, իսկ երկրորդը՝ հոգևորականների համար: Պարսկերենում նույնպես կան զուգահեռներ. **دردرس** և **سردرس** բառերի կազմությունը նույնն է, սակայն առաջինը նշանակում է **գլխացավանք**, իսկ երկրորդը՝ **գլխացավ**:

Պարսկերեն **دل سوخته** և **دل دلسوخته**, **پا برهنه** և **پا برهنه پا** բառերի բաղադրիչները նույնն են: Նույնը հայերենում՝ **բոկոտն** և **ոտաբոբիկ**, որոնցում նույնպես բաղադրիչների տեղը փոխված է (հայերենում **բոկիկ** բառը առաջընթաց առնմանման արդյունքում դարձել է **բոբիկ**):

Պարսկերենում **خانه به دوش** բարդ բառն իր կազմությամբ տրական հոլովով կառուցված բառակապակցություն է: Նմանատիպ օրինակ առկա է նաև հայերենում. **մերձիմահ** բարդ բառը թեև բարդություն է, սակայն կազմված է տրական հոլովով:

Հարկ է նշել, որ հայերենում և պարսկերենում բոլոր տեսակի բարդ բառերի շեշտադրումն իրականացվում է պարզ բառերի նման՝ շեշտը դրվում է բարդ բառի ամենավերջին վանկի վրա:

Ի դեպ, բարդ բառեր կազմելիս թե՛ հայերենում (**գլխագին**, **սրախողխող**) և թե՛ պարսկերենում (**سراسر، گوناگون**) կիրառվում է **ա** հոդակապը:

Մեր կարծիքով՝ **ա** հոդակապը հայերենում և պարսկերենում ձևավորվել է անկախաբար:

Հայերենն ու պարսկերենը թվականների կիրառության հարցում նույնպես բազմաթիվ ընդհանրություններ ունեն:

Հայերենում և պարսկերենում, մյուս հնդեվրոպական լեզուների նման, **1-ին** բառը կազմված չէ թվականից, այլ՝ 1-ի հետ առնչություն չունեցող **առաջ** և **نخست** բառերից (**առաջին**, **نخستین**): Նույնը կարելի է ասել դասականների կարգին պատկանող **վերջին** և **آخرین** բառերի մասին: Ուշագրավ է, որ երկու լեզուներում

էլ դասականները կազմելիս հավելվում է **-ին ین -** վերջավորությունը:

Հնդեվրոպական լեզուներում բաշխական թվականի հնագույն ձևը համարվում է կրկնությունը⁵. հայերենում **հինգ-հինգ**, պարսկերենում **پنج-پنج** :

Պարսկերենում կոտորակը կազմվում է **یک** բառի բարդությամբ: Այսպես, սկսած երեքից՝ **سه-یک**, **چهار-یک** (Աճառյանը կարծում է, որ հայերենի -ակ ձևով կոտորակային թվականների հիմքում ընկած է պարսկերեն **یک** (մեկ) ձևը)⁶:

Ինչ վերաբերում է մերձավորական թվականներին, ապա այնպես, ինչպես հայերենում 10-20 հոգի ասելով հասկանում ենք 10-ից մինչև 20 եղած որևէ թիվ, նույնը կարելի է նկատել պարսկերենում (**ده بیست نفر**), որն արտահայտում է մինևնույն իմաստը: Հարկ է նշել, որ պարսկերենում **10-دیگه** 10-ից բարձր հավանական թվին հավելվում է **اند** անորոշ թվականը (3-9-ի միջև եղած անորոշ թվական), որը խորթ է հայերենին և հնդեվրոպական մյուս լեզուներին: Իսկ հավանական թվին ավելացնելով **میش** անորոշ հոդը (*մի երկու հոգի*)՝ պարսկերենի նման (**یکی دو نفر**) արտահայտում ենք անորոշ թվական⁷:

Մտավոր ժամը ցույց տալու համար հայերենում օգտագործվում է **կողմերը** (չորսի կողմերը), ճիշտ այնպես, ինչպես պարսկերենում ասվում է **طرفهای چهار**⁸:

Նախադրությունը (կապ) և **մակբայը** կազմությամբ նույնն են, բայց առաջինը ցույց է տալիս նախադասության մի անդամի հարաբերությունը մյուսին⁹, իսկ երկրորդը՝ գործողության հատկանիշ կամ հանգամանք, որով պայմանավորված է գործողությունը: Մակբայը վերաբերում է բային այն բոլոր դեպքերում, երբ ցույց է տալիս, թե ինչպես, որտեղ, երբ է կատարվում գործողությունը և վերաբերում է ածականին կամ մեկ այլ մակբայի, երբ ցույց է տալիս դրանց հատկանիշները¹⁰: Այլ կերպ ասած՝ նախադրությունները վերաբերում են գոյականներին, իսկ մակբայները՝ բայերին:

Օրինակ՝ **մոտ** բառը **Արարատյան բարբառում** և արևելահայ գրականության մեջ ոչ միայն նշանակում է «մերձ», «ոչ հեռու», այլև «կողքին», «քովը», «առընթեր»: Այսինքն՝ այն թե՛ նախադրություն է և թե՛ մակբայ: Օրինակ՝ **Արի՛ ինձ մոտ նստիր** նախադասությունում **մոտ** բառը մակբայ է և նշանակում է «քով»: Իսկ **Մեր տունը համալսարանի մոտ է** նախադասության մեջ **մոտ** բառը նախադրություն է և օգտագործվել է «ոչ հեռու» իմաստով:

Նույն գուգահեռն առկա է նաև պարսկերենում.. **بیا نزد من بنشین** և **خانه ما نزد دانشگاه است** որտեղ **نزد** բառը մի դեպքում նշանակում է «քովը», մյուս դեպքում՝ «ոչ հեռու»: Հետաքրքիր է, որ թե՛ հայերենում և թե՛ պարսկերենում «ոչ հեռու» իմաստն ընդգծելու համար օգտագործվում է **իկ** մասնիկը՝ **մոտիկ** և **نزدیک**¹¹:

Հայերենում և պարսկերենում հաճախ նախադրություններն առաջացել են

5 Տե՛ս Գ. Աճառյան, Լիակատար քերականություն Գայոց լեզվի, հ. 1, Եր., Գայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1952, էջ 297:

6 Տե՛ս նույն տեղում, էջ 315:

7 Տե՛ս նույն տեղում, էջ 322:

8 Ուշագրավ է, որ Պոլսի բարբառով մոտավոր ժամը նշելու համար մի ժամանակ օգտագործվում էր ջրերը արտահայտությունը: Աճառյանի կարծիքով՝ այդ ձևն առաջացել է թուրքերեն sularında հոմանիշից: Մինչդեռ պարսկերենում սու նշանակում է կողմ, որով sularında դառնում է կողմերը, սակայն, պոլսահայերը սխալմամբ համարելով, որ այն թուրքերեն su-ջուր բառից է առաջացել, թարգմանաբար հայերեն օգտագործել են ջրերը:

9 Տե՛ս <http://www.usum.org/index/0-107>:

10 Տե՛ս <http://www.usum.org/index/0-90>:

11 Տե՛ս Գ. Աճառյան, Լիակատար քերականություն Գայոց լեզվի, հ.5, Եր., Գայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1965, էջ 152:

գոյականներից: Այստեղ ուշագրավ գուգահեռներ կարելի է նկատել երկու լեզուներում. մեր կարծիքով՝ հայերեն «**յաղագս**» բառը գոյացել է **աղագ** (ճանապարհ) գոյականից, այնպես ինչպես պարսկերեն **برای** նախադրությունը կազմվել է **ای** (ճանապարհ) գոյականից:

Հայերեն **հետ** բառի ծագումը կապված է հնիս. *Pedo* (*որք*) բառի հետ, նույնը պարսկերենում՝ **پ** բառն առաջացել է հնիս. *Pedo* **پ** (*որք*) բառից:

Հետաքրքիր նմանություն կա հայերեն և պարսկերեն հաստատական և ժխտական մակբայերի միջև. **չե՞ս գնացել** հարցին դրական պատասխանելիս հայերենով նաև ասում են՝ **ինչու՞** կամ **ինչու՞ չէ**, պարսկերենով՝ **چرا، چرا نه**, ինչը ենթադրում է հաստատական պատասխան, այսինքն՝ «**այո**»:

Օր բառով կազմված մակբայական դարձվածքը նույնպես հայերենում և պարսկերենում միատեսակ է: Գրաբար՝ «**օր ընդ մէջ**», աշխարհաբար՝ **օրը մեջ**, իսկ պարսկերենով՝ **یک روز در میان**:

Օրերի շարքը դեպի ապագան կազմելիս հայերի ու պարսիկների մոտեցումները նույնն են.

Հայերեն՝	Այսօր, վաղը, վաղը չէ մյուս օրը
Պարսկերեն՝	امروز، فردا، فردا نه پس فردا

Թվերի շարքը կազմելիս պարսկերենում և հայերենում կիրառվում է նույն սկզբունքը. ամենամեծ թիվը նախադաս է, որին հաջորդում են մյուս թվերը՝ մեծից փոքր հերթականությամբ: Օրինակ՝ **123456** հարյուր քսաներեք հազար չորս հարյուր հիսունվեց. **صد و بیست و سه هزار و چهار صد و پنجاه و شش**:

Հետաքրքիր իմաստաժամանակային և կառուցվածքային համընկնումներ կարելի է գտնել՝ համադրելով պարսկերենի **خواستن** օժանդակ բայով կազմված սահմանական ապառնին հայերենի **կը (կու)** եղանակիչով ենթադրական ապառնիի հետ¹²:

Միջին հայերենում գրաբարի ապառնին սղվելուց հետո՝ որպես ապառնի օգտագործվում էր **կամիմ** բայը (**կամիմ սիրել** կամ **սիրել կամիմ**):

Պարսկերենի բուն ապառնի ժամանակը նույնպես կազմվում է **خواستن** (ցանկանալ) բայի ներկայի հիմք+դիմային վերջավորություններ+իմաստակիր-խոնարհվող բայի հատած անորոշ դերբայ մասնակադապարով, այն է՝ հայերեն **կը** եղանակիչը իր ծագումնաբանությամբ կապվում է գրաբարի **կամիլ** եղանակավորիչ բայի ներկայի եզակի թվի երրորդ դեմքի **կամի** ձևի հետ և առաջ է եկել դրա և անորոշի լայն գործածության հիմքի վրա՝ մեկի անսովոր կրճատման, իսկ մյուսի դիմավորման ենթարկվելու ճանապարհով ու հետևանքով¹³:

Ուշագրավ է, որ պարսկերենում նույնպես ապառնին կազմվում է **خواهم (կամիմ)** ձևով¹⁴:

Հետաքրքիր է հայերեն **ստանալ** բայից կազմված ըղձական եղանակի եզակի թվի առաջին դեմքի նմանությունը պարսկերենի նույնիմաստ և նույնարմատ **ستاندن** բայի համանման կազմության հետ՝ հայ. **ստանամ**, պրսկ. **ستانم** (սեթանամ):

12 Տե՛ս Լյուսյա Ղազարյան, Պարսկերենի սահմանական եղանակի բուն ապառնի ժամանակաձևը հայերենի հարադուրյցի հետ որոշ զուգահորական դիտարկումներում, Արևելագիտական ժողովածու, հ. 5, եր., 2004, էջ 99:

13 Տե՛ս նույն տեղում, էջ 99:

14 Տե՛ս Յ. Աճառյան, Լիակատար քերականություն Հայոց լեզվի, հ. 4-Բ, եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1961, էջ 131:

Նմանությունը պատահական համարել չի կարելի:

Հայերենում (արևմտահայերեն և արևելահայերեն) և պարսկերենում անձնական դերանունների հոլովման ժամանակ տրականի ու հայցականի կազմությունը նույնն է.

<i>Ուղղական</i>		<i>Սեռական, տրական, հայցական</i>	
Ես	من	ինձ	من را / مرا
դու	تو	քեզ	تو را
նա	او	նրան	او را
մենք	ما	մեզ	ما را
դուք	شما	ձեզ	شما را
նրանք	آنها	նրանց	آنها را

Անշուշտ, սա պարսկերենի ազդեցության արդյուք չէ, որտեղ, ինչպես ցույց է տալիս վերոբերյալ աղյուսակը, սեռականի, տրականի ու հայցականի հոլովածները ինչպես գոյականների, այնպես էլ դերանունների պարագայում նույնն են:

2. Իրանահայ բարբառների կրած ազդեցությունը պարսկերենից

Իրանահայ բարբառները կրում են պարսկերենի միակողմանի ազդեցության խոր հետքեր, որի հետևանքով իրանցիների հետ շփման մեջ գտնվող հայերը ոչ միայն իրենց լեզվի բառաֆոնդն են հարստացրել նոր բառերով, այլև առօրյա օգտագործման նյութ են դարձրել մի կողմից՝ մեծ թվով պարսկերեն բառակապակցությունների ու արտահայտությունների պատճենումները, իսկ մյուս կողմից՝ հայերենի որոշ հնչյունական և քերականական տարրեր համապատասխանեցրել են պարսկերենին:

Մարադայի բարբառում կոտորակավոր թվականների համար օգտագործվում է բացառական հոլովը. «**իրեքեն մէկ ա**» (1/3), «**չուիրսեն մէկ ա**» և այլն: Հետաքրքրական է նաև «**երկու օր մէ կօսօր**» արտահայտությունը՝ **երկուսուկես օր**-ի փոխարեն, որն ակնհայտորեն կրում է պարսկերենի ազդեցությունը **دو روز و نیم**:

Իրանահայ որոշ բարբառներում պարսկերենի ազդեցության պատճառով թվերի շարքում օգտագործվում է **ու** կապը (հարյուր ու քսան ու երեք հազար ու չորս հարյուր ու հիսուն ու վեց)¹⁵:

Վերջին շրջանում միջին հայերենի նախդիրներն աստիճանաբար կորցրին իրենց կիրառության ոլորտը: Այդ երևույթն առավել նկատելի դարձավ աշխարհաբարում, որտեղ ընդհանրապես դրանք բացակայում են: Օրինակ, եթե զրաբարում ասվում էր **գալ ի տուն**, ապա աշխարհաբարում նույնը հնչում է հետևյալ կերպ՝ **տուն գալ**: Գրաբարյան **ելանել ի դուրս**-ի փոխարեն աշխարհաբարն օգտագործում է **դուրս ելնել**, **մնալ ի ճանապարհին**-ի փոխարեն՝

15 Նույնն առկա է Ղարաբաղի բարբառում:

մնալ ճանապարհին և այլն:

Նախդիրների անկման նույնպիսի միտում կա նաև ժամանակակից պարսկերենում: Օրինակ՝ գրական պարսկերենով ասվում է **به خانه رفتم**, իսկ ժողովրդական լեզվով՝ առանց **به** նախդիր **خانه رفتم**, գրականով՝ **بودم**, ժողովրդականով՝ **بیمارستان بودم**: Պարսկերենում այդ երևույթն առավել նկատելի է հատկապես ժամանակ ցույց տվող բառերի պարագայում: **تابستان آیدم**, **تابستان** 16:

Կենտրոնական Իրանի հայկական բարբառներում, ի տարբերություն **ում** ճյուղի մնացած բոլոր բարբառների, բացակայում է **ում** վերջավորվող ներգոյական հոլովը. նախադասության մեջ այդ իմաստն արտահայտում է ուղղականը: Օրինակ՝ դպրոց շատ աշակերտ կա, կամ՝ քաղաք մարդ կորում ա և այլն: Սա պարսկերենի **կենտրոնական** բարբառների ու խոսվածքների ուղղակի ազդեցությունն է իրանահայ բարբառների վրա: Նկատելի է, որ Իրանի **կենտրոնական** բարբառներում նույնպես բացակայում է ներգոյական հոլովի **դար** մասնիկը:

Տրական և հայցական իմաստներով դիմորոշ հոդի գործածությունը բայերի հետ ընդունված է իրանահայ որոշ բարբառներում: Օրինակ՝ **Մարադայի** բարբառով՝ «**Մէ ծի պոնենքո**» նշանակում է «**Քեզ համար մի ձի բռնենք**», կամ՝ «**Պտտոնէս էրդ**» նշանակում է «**Քեզ էր փնտրում**», կամ՝ «**Նա շատ քաղցր յե ուտենդ, նա շատ տառն յէ՛ քայենդ**», նշանակում է՝ «**Պետք չէ այնքան քաղցր լինել, որ քեզ ուտեն, ոչ էլ այնքան դառը, որ քեզ դեն նետեն**»: Թեիրանահայերի մոտ նույնպես նկատելի է այդ երևույթը, երբ դիմորոշ հոդը տրական և հայցական իմաստներով հավելվում է բայերին. «**Համարդ գիրք են բերել**» նշանակում է՝ «**քեզ համար գիրք են բերել**» և այլն:

Թավրիզի բարբառում **իմանալ** բայը այլ բայերի հետ հանդես է գալիս որպես օժանդակ բայ՝ «**կարողանալ**» իմաստով. «**Չեմ իմանում ուտել**» նշանակում է «**չեմ կարողանում ուտել**»: Պատճառը թուրքերենի ազդեցությունն է, որտեղ **bilmek** «**գիտենալ, կարողանալ**» բայը հանդես է գալիս որպես օժանդակ բայ: Ենթադրվում է, որ «**գիտենալ և կարողանալ**» իմաստն արտահայտող թուրքերեն **bilmek** բայն իր հերթին ազդվել է խոնարհման մեջ գրեթե միևնույն ձևն ունեցող պարսկերեն **توانستن** (կարողանալ) և **دانستن** (իմանալ) բայերից: **نمی توانم** (չեմ կարող) և **نمی دونم** (չգիտեմ): Այս դեպքում պարսկերենից կրած հայերենի ազդեցությունը միջնորդավորված կարելի է համարել:

Իրանահայ բարբառներն առատորեն կիրառում են պարսկերենին հատուկ դարձվածներ և արտահայտություններ, որոնք փաստորեն պարսկերենի պատճենումներն են:

Օրինակ՝ իրանահայը որևէ փորձանքի ենթարկվածի կամ հիվանդ մարդու հանդիպելիս, բառացի թարգմանելով պարսկերենի **بدا بد** արտահայտությունը, ասում է «**Աստված վատ չտա**», որով նա նկատի ունի «**Այդ ինչ է պատահել, առողջություն եմ մարթում, Աստված փորձանքից հեռու պահի** և այլն»: Կամ, դիմելով պարսկերեն լեզվի զինանոցին, իրանահայը զբաղված մարդու բարևելիս օգտագործում է պարսկերեն **خسته نباشید**-ի հայերեն պատճենումը՝ «**հոգնած չլինեք**»: Շնորհակալություն հայտնելիս իրանահայն օգտագործում է

16 Տե՛ս Գ. Աճառյան, Լիակատար քերականություն Հայոց լեզվի, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Եր., 1965, հ.5, էջ 108:

պարսկերենից թարգմանված **دستت درد نکند** «ձեռքդ չցավի» արտահայտությունը:

Իրանահայ ծնողը որդուն դիմելիս ընդունված կարգով չի ասում՝ որդիս, աղջիկս, գավակս, դատրիկս, այլ, հետևելով իրանցիների օրինակին, եթե մայր է, ապա գերադասում է ասել «**մամա ջան**», իսկ եթե հայր՝ «**պապա ջան**»: Նույն կերպ են վարվում մյուս հարազատները՝ մորաքույրը, քեռին, հորեղբայրը, հորաքույրը և այլն՝ իրենց մանկահասակ զարմիկին անվանելով համապատասխանաբար «**մորքուր ջան**», «**քեռի ջան**», «**հոպար ջան**», «**հորուր ջան**» և այլն (մաման կերպ կարծես մեծահասակները մանուկներին սովորեցնում են, թե ինչպես է անհրաժեշտ դիմել իրենց): Հայաստանում էլ նույն նպատակով մեծահասակը, օրինակ՝ մորաքույրն իրեն դիմելու ձևը զարմիկին ակնարկելու համար հաճախ կիրառում է «**Մորքուրը մեռնի քո բոյին**» կամ մման այլ փաղաքշական արտահայտություններ:

Իրանահայ բարբառներում կան նաև այնպիսի բառակապակցություններ, որոնք պարսկերենի լեզվաշինության օրենքներին չեն ենթարկվում, այլ հանդիսանում են միայն պարսկերենի համարժեք արտահայտության իմաստային զուգորդումը: Այդ կարգի զուգորդումների թվին է պատկանում «**հետևախոսություն**» բառը, որը պարսկերեն **پشت سر کسی حرف زدن** (մեկի հետևից խոսել) արտահայտության հայերեն տարբերակն է՝ կազմված հայերենի լեզվաշինության օրենքներով: Իրանահայերի կողմից օգտագործվող «**հոգնահան լինել**» արտահայտությունը, որը նույնպես ենթարկվել է հայերենի լեզվաշինության օրենքներին, համարժեք է պարսկերենի **خستگی در کردن**, բառացի՝ «**հոգնածությունը դուրս հանել**» դարձվածքին: Նույնը կարելի է ասել «**ձեռնազալիք**» բառի մասին, որը թեև ձևով մման չէ պարսկերեն համարժեք նշանակություն ունեցող արտահայտությանը՝ **از دست کسی بر آمدن**, սակայն, կազմված լինելով հայերենին հատուկ քերականական օրենքներին համապատասխան, օգտագործվում է նույն իմաստով:

Տուրք տալով պարսկերենի լեզվամտածողությանը՝ իրանահայն իր միտքն արտահայտում է՝ օգտագործելով պարսկերենին հատուկ հոլովական առանձնահատկությունները: Իրանահայ բարբառներում հոլովները և նրանց կազմությունը չեն տարբերվում արևելահայերեն գրական լեզվից, սակայն դրանց կիրառման ոլորտները ենթարկվել են պարսկերենի հոլովական համակարգի ազդեցությանը: Օրինակ՝ երբեմն տրական հոլովի փոխարեն օգտագործվում է բացառականը: Այսպես՝ հայերենում տրական հոլովով կազմված **սար-(ը) բարձրանալ** կամ **ուշքը գնալ** բառակապակցության փոխարեն օգտագործվում է բացառական հոլովը՝ **սարից բարձրանալ** կամ **ուշքից գնալ** ձևերը:

Իրանահայ բարբառներում կան այնպիսի արտահայտություններ և լեզվաբանության համար հազվադեպ երևույթներ, որոնք կարող են համարվել խառնածին լեզվի լավագույն օրինակ: Հատկանշական է, որ պարսկերեն **թուն** և **ուն** վերջավորությունները վերջին շրջանում տարածվել են հայերեն բառերի վրա. մի երևույթ, որ աննախադեպ է հայ-իրանական լեզվական առնչությունների համար: Օրինակ՝ **կենացող** բառի վերջին **ղ** ստացական դերանունը փոխարինվել է պարսկերենի նույնարժեք ստացական դերանունով, այն էլ՝ բարբառային, և հայերեն բառը ստացել է հետևյալ տեսքը՝ **կենացթուն**, ասել է թե՛ «**ձեր կենացը, կենացներդ**»:

Ինքներս արահայտության մեջ տեղ գտած **ս** ստացական դերանվանը երբեմն

Գ. (Թ) Գարի, թիվ 1 (33) հունվար-մարտ, 2011

ՎԵՄ համահայկական հանդես

հավելվում է **ուն** պարսկերեն ստացական դերանվան բարբառային ձևը, և բառն արտասանվում է **ինքներսուն** ձևով, որը համահունչ է պարսկերենի **խողենուն՝ خودمون** նույնիմաստ բառին: Հայտնի էր միայն պարսկերենի ածականի համեմատական աստիճանն արտահայտող **تر** մասնիկի կիրառությունը հայերեն ածականի հետ (վատթար), որը սակայն, կորցնելով իր բուն իմաստը, սահմանափակվել է հենց այդ բառով և տարածում չի գտել՝ կորցնելով նույնիսկ իր հիմնական իմաստը:

Պարսկերենում լայն տարածում ունեցող ներկա շարունակականը, որը կազմվում է **داشتن** բայի ներկայի հիմքով՝ **دارم می نویسم**, վերջին շրջանում կիրառվում է նաև իրանահայ բարբառներում **ունեն գրում են** ձևով, որը նշանակում է՝ **«այս պահին՝ հենց հիմա գրում են»**:

Մեր կարծիքով՝ պարսկահայերենում **առանց** բառից հետո օգտագործվող շեշտագուրկ **ի**-ն պարսկերենում օգտագործվող իզաֆետային **է**-ին համապատասխանող հավելում է: Օրինակ՝ **առանց-ի քեզի, առանց-ի տեսնելու** և **այլն بدون دیدن ، بدون تو** :

Ներքոգրյալ ցանկը պարունակում է պարսկերենի ազդեցությանը կազմված այն դարձվածները, որոնք կիրառելի չեն հայերենում: Այս ցանկում տեղ գտած արտահայտությունների շարքը կարելի է համալրել պարսկերեն արտահայտությունների պատճենմամբ կազմված նոր դարձվածներով, ուստի դրանց թիվը կարող է լինել անհամեմատ շատ:

Պարսկերենի ազդեցությանը ստեղծված իրանահայ բարբառներին հատուկ որոշ արտահայտություններ

Պարսկերեն արտահայտություն	Պարսկերեն արտահայտության պատճենումը	Նույնը՝ գրական հայերենում
پیشرفت کردن	Առաջանալ	Ջարգանալ
سر زدن	Գլուխ խփել	Այցելել (հանկարծակի)
سر کشیدن	Գլուխը քաշել	Կոնծել
سر کشیدن	Գլուխ քաշել	Այցելել
کلاه گذاشتن	Գլխարկ դնել	Խարել
از رو نرفتن	Երեսից չզնալ	Համառել
وقت کردن	Ժամանակ անել	Ժամանակ ունենալ
زیر قول زدن	Խփել (խոսքի) տակից	Խոստումը չկատարել
کوتاه آمدن	Կարճ գալ	Վազ անցնել
لذت بردن	Հաճույք տանել	Հաճույք ստանալ
از پشت سر کسی حرف زدن	Հետևախոսություն անել	Բամբասել
خستگی در کردن	Հոգնահան լինել	Հանգստանալ

در دسترس نبودن	Չեռնահաս չլինել	Հասանելի չլինել
از تنهائی در آوردن	Մենակությունից հանել	Ընկերակցել
زحمت را کم کردن	Նեղությունը քչացնել	Գնալ (չխանգարելու համար)
جواب کردن	Պատասխանել	Մերժել
از ته دل خندیدن	Սրտի տակից ծիծաղել	Անկեղծ ծիծաղել
جا افتادن	Տեղ ընկնել	Ընդունվել, ճանաչվել
جا گذاشتن	Տեղ թողնել	Մոռանալ
پاین آمدن	Ցած գալ	Իջնել
کم آوردن	Քիչ բերել	Պակասություն զգալ

Վերոբերյալ բոլոր օրինակները կարող են հիմք ծառայել իրանահայ բարբառներում առկա՝ պարսկերենի ազդեցությունը կրող բառերի ու բառակապակցությունների ամբողջական ցանկ կազմելու համար:

Summary

ON THE LINGUISTIC GENERALIZATIONS BETWEEN ARMENIAN AND PERSIAN

Vahe G. Arakelyan

In the article the inter-influences of Armenian and Persian are studied, which are first and foremost conditioned by their etymological linkages. Special attention has been paid to the linguistic generalizations between Armenian and Persian broadly dating back centuries, which are expressed in different grammatical structures.

The author also explores the deep traces of the one-facet influence of Persian on Iranian-Armenian dialects. The Armenians dealing with the Iranians not only enriched their word stock with new words, but also made everyday usage copies of Persian word combinations and expressions and, on the other hand, they matched some of the Armenian phonological and grammatical elements with the Persian ones.